ԻՍՈՒՎԱՆ ԵՎ ԳՈՐԴԻՈՆԸ Մ. Թ. Ա. XII-X ԴԱՐԵՐՈՒՄ

(Համեմատական վերլուծություն)

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Վ. ՔՈՍՅԱՆ

Մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամի[1] *ծավալման բարդ-ռակետի փուլում (դարի առաջին կես) Առաջավոր Ասիայի և Էգեյան ծովի ավազանի երկրների կենսագործունեությունը բնորոշվում է հետևյալ վայրընթաց միտումներով՝ 1) քաղաքական միավորների անկում կամ ակտիվության ծայրաստիճան նվազում*[2]*, 2) տնտեսական համակարգի քայքայում կամ վերացում, 3) քաղաքակրթության կենտրոնների տեղաշարժ դեպի նոր վայրեր, 4) քաղաքային մշակույթի անկում, 5) բնակչության շարժունակության աննախադեպ աճ*[3]*, 6) միջազգային առևտրի անկում։ Նշված երևույթների ինտենսիվության աստիճանը տարբեր է, կախված այս կամ այն տարածաշրջանի աշխարհագրական դիրքից, բնակլիմայական պայմաններից, քաղաքական կազմակերպվածության բնույթից և տնտեսավարման եղանակից։ Առաջավորասիական և էգեյան հասարակությունների զարգացման պրոցեսում տեղ գտած վերոհիշյալ փուլը շրջադարձային կետ հանդիսացավ դրանց հետագա կենսագործունեության համար։ Շուրջ երկու—երեք դար տևած ճգնաժամային երևույթների ներգործության հետևանքով արմատական փոփոխություններ տեղի ունեցան ուսումնասիրվող ողջ ընդարձակ տարածաշրջանում։ Վերջին տարիների հետազոտությունները ցույց են տալիս, որ ճգնաժամային երևույթները չեն շրջանցել նաև Հայկական լեռնաշխարհի հասարակությունները, մասնավորապես, Վերին Եփրատի ավազանի քաղաքական միավորները։*

Մերձավորարևելյան ճգնաժամի համակողմանի գիտական ուսումնասիրություններ սկսվել է 1980-ական թթ. վերջերից և այսօր դեռևս պարզ չեն մ. թ. ա. XII—X դարերի ընթացքում Իրանական սարահարթից մինչև Էգեիդա ընկած քաղաքակրթության կենտրոնների քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման առանձնահատկությունները, վերոհիշյալ ճգնաժամային երևույթների փոխկապակցվածության աստիճանը, տարբեր տարածաշրջանների միջև եղած փոխազդեցությունները։ Մինչև վերջերս «խավար դարաշրջան» հորջորջվող այս ժամանակահատվածի օբյեկտիվ, իրական պատկերի վերհանման գլխավոր խոչընդոտը համաժամանակյա գրավոր աղբյուրների սակավությունն է։ Այդ է պատճառը, որ որևէ տարածաշրջանի համար ճգնաժամային փուլի ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների վերականգնումը իր ամբողջությամբ գրեթե անհնար է։ Նման դեպքերում ուսումնասիրողը այլընտրանք չունի բան դիմելու համաժամանակյա անալոգիաների

---

1 *Մերձավորարևելյան ճգնաժամի վերաբերյալ տե՛ս, մասնավորապես,* The Crisis Years, the 12th Century B. C. From Beyond the Danube to the Tigris (eds. W. A. Ward and M. Sh. Joukowsky), Dubuque, 1992; *Ա. Վ. Քոսյան. Մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը (դոկտորական ատենախոսության սեղմագիր). Երևան, 1997։*

2 *Ճգնաժամի ընթացքում պատմության ասպարեզից հեռացան խեթական տերությունը, մայրցամաքային Հունաստանի միկենյան պետությունները, Փոքր Ասիայի և սիրիական ու փյունիկյան տարածաշրջանի մի շարք պետություններ. ռազմաքաղաքական ակտիվության անկման ակնհայտ նշաններ են վկայված Եգիպտոսում, Ասորեստանում և Բաբելոնիայում։*

3 *Այս ժամանակաշրջանում բնակչության լայնամասշտաբ տեղաշարժեր են վկայված Առաջավոր Ասիայի և Էգեիդայի գրեթե բոլոր շրջաններում (հյուսիսբալկանյան ժողովուրդներ, խեթեր ու լուվիացիներ, «ծովի ժողովուրդներ», արամեացիներ, հրեական ցեղեր, մուշկեր և այլն)։*

օգնությանը։ Պատմական պրոցեսի ուսումնասիրման ընթացքում պակասող օղակների վերականգնման այս մեթոդը, իհարկե, չի կարող լիակատար հաստատության հավակնել, սակայն, այնուամենայնիվ, որոշ դեպքերում կիրառելի է թույլատրելիության սահմաններում։

Ներկա հետազոտության նպատակն է շրջանառության մեջ դնել Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածում մ. թ. ա. XII—XI դարերում վկայված մի կարևոր գործընթացին վերաբերող նորագույն ուսումնասիրությունների նյութեր, որոնց պատմագիտական արժեքավորումը դեռևս ուշադրության է։ Առկա սկզբնաղբյուրների շրջանակներում առաջարկվող կանխավարկածը խնդրի գիտական լուծման հնարավոր տարբերակներից մեկն է միայն։

Մեր նախորդ ուսումնասիրություններից մեկում[4] ներկայացվեց վերին-Եփրատյան երկրներից մեկի՝ Իսուվայի (հայկ. Ծոփք) տարածքում մերձավորարևելյան ճգնաժամի փուլում հնագիտորեն վկայված ժողովրդագրական և մշակութային (համապատասխանաբար, նաև՝ քաղաքական) արմատական փոփոխությունների պատկերը։ Այդ փոփոխությունների էությունը հետևյալն է։

Մ. թ. ա. XII դարի կեսերին Իսուվայի ուշ բրոնզեդարյան բնակավայրերը լքվել են բնակիչների կողմից և հաջորդ փուլում (վաղ երկաթեդար), գրեթե առանց ընդմիջման, այստեղ հայտնվում է մի բացարձակապես նոր, պարզունակ մշակույթ, որը նույն ժամանակներում վկայված է Հայկական լեռնաշխարհի տարբեր հատվածներում։ Այս մշակույթի կրողների հլակետը մասնագետները միանշանակ տեղադրում են Հարավային Անդրկովկասում՝ Թոեղբլան մշակութային արեալում։ Ստորև ներկայացնենք Իսուվայի հնավայրերի ուսումնասիրությունից ստացված արդյունքները, որից հետո փորձենք համադրել դրանք արևմտակենտրոնական Փոքր Ասիայի հայտնի հնավայրերից մեկի՝ Յասսրհյոյուք-Գրդիոնի համաժամանակյա շերտերի հետ։ Իսուվայի՝ հետազոտության առարկա հնավայրերը գերաղանցապես ընկած են մի տարածքում, որը ներկայումս կազմում է Կեբանի ջրամբարի մակերեսը, ինչպես նաև Կարակալայի շրջանը։ Դրանք են՝ Նորշումթեփե, Կուրուչութեփե, Թեփեջիկ, Դեղիրմենթեփե, Հաքիրուշաղը, Իմիկուշաղը, Իմամօղլու և այլն։ Սույն տարածքը մ. թ. ա. II հազարամյակի երկրորդ կեսին հանդիսանում էր Իսուվայի արևմտյան հատվածը, որն անմիջականորեն հարում էր խեթահպատակ Մայդիա-Մելիդին՝ ընական սահման ունենալով Եփրատը։ Ուրարտական ժամանակաշրջանում այստեղ հիշատակվում են Գաուրախի (URUGaurahi, հայկ. Գաուրեք)[5] և Տումեիշկի (URUTumeiški, անտիկ Տոմիսա, հայկ. Թմենիս)[6] քաղաքները։ Մ. թ. ա. II հազարամյակի երկրորդ կեսին, հատկապես XIV—XIII դարերում Իսուվան առաջնակարգ նշանակություն է ստանում խեթական տերության արևելյան քաղաքականության մեջ. խաթթուսասի և Իսուվայի արքայատոհմերի միջև ենթադրվում է ազգակցական հարաբերությունների գոյություն[7]։ Ուրարտական շրջանում Իսուվայի տարածքով էր ընթանում Ուրարտուի առաջխաղացումը դեպի Փոքր Ասիա[8]։ Սկսած մ. թ. ա. XIV դարից Իսուվան ավանդաբար արևմտամետ կողմնորոշում է ունեցել, մի միտում, որը, համանաբար, շարունակվել է նաև ուրարտական ղարաշրջանում[9]։

---

4 Ա. Վ. Քոսյան. Իսուվան (Ծոփքը) մ. թ. ա. XIII—XII դարերում.—«Պատմա-բանասիրական հանդես», 1997, № 1, էջ 177—192։

5 Н. В. Арутюнян. Топонимка Урарту. Ереван, 1985, с. 62.

6 Նույն տեղում, էջ 188։

7 H. G. Güterbock. Hittite Hieroglyphic Seal Impressions from Korucutepe.— Journal of Near Eastern Studies, vol. 32, № 1—2, p. 139f.

8 Այս շրջաններով են անցել ուրարտական արքաներ Մենուայի, Արգիշտի I-ի և Սարդուրի II-ի սրշավանները դեպի արևելյան Փոքր Ասիա։ Սարդուրի II-ի Իզոլլուի հայտնի արձանագրությունը նույնպես գտնվել է այս շրջանում՝ Եփրատի գետանցման վայրում։

9 Ենթադրվում է, որ փոքրասիական Մելիդի տիրապետությունը կարող էր տարածվել նաև Եփրատից արևելք՝ մեզ հետաքրքրող շրջանի վրա (Н. В. Арутюнян. Указ. соч., с. 188).

Խուվայի տարածքի մասին պատկերը կներկայացվի երկու կարևոր հնավայրերի՝ Նորշունթեփեի և Կորուջութեփեի պեղումներից ստացված նյութերի հիման վրա[10]։ Այս ընտրությունը պատահական չէ, քանի որ դրանցից առաջինը, հավանաբար, հանդիսացել է խեթական տիրապետության շրջանի Խուվայի արքայանիստ քաղաքը։

Ստորև ներկայացնենք վերոհիշյալ հնավայրերի հետազոտությունից ստացված արդյունքները։

Շերտի սկիզբը—Վաղ երկաթեդարյան շերտը հաջորդել է ուշբրոնզեդարյան շերտին առանց ընդմիջման և ավերածությունների։

Ճարտարապետություն—Համեմատաբար պարզունակ տեխնիկա, կազմակերպված լայն շինարարական գործունեության բացակայություն։

Խեցեղեն—Բացառապես պարզունակ, առանց բրուտի անիվի պատրաստված իրեր, անոթների մեծ մասը առօրյա, ֆունկցիոնալ նշանակություն ունի։

Բնակիչների կենցաղը—Բնակավայրերի տարածքը մեծ է, սակայն բնակչությունը վարել է գյուղական պարզունակ կենցաղ։

Շերտի տևողությունը—Շերտը տևել է առավելագույնս շուրջ 150 տարի։

Շերտի ավարտը—Ավերածության հետքեր չկան. ակնհայտ է, որ բնակչությունը խաղաղ կերպով լքել է բնակավայրերը։

Ըստ մասնագետների կարծիքի, Խուվայի տարածքից հայտնի, թվով 13 վաղ երկաթեդարյան հնավայրերը իրենցից ներկայացնում են ապակենտրոնացված գյուղատիպ բնակավայրերի մի խումբ[11]։ Վերոհիշյալ պատկերը կարելի է լրացնել Կորուջութեփեի պեղումներից ստացված ընտանի կենդանիների ոսկրաբանական նյութերի ուսումնասիրության արդյունքներով[12], որոնք վկայում են ուշ բրոնզից վաղ երկաթ անցման փուլում բնակչության կենսագործունեության ծավալի կրճատման օգտին։

	Ուշ բրոնզ	Վաղ երկաթ
ՁԻ	21	1
ԷՇ	67	7
ԿՈՎ	2484	38
ՈՉԽԱՐ	501	4
ԱՅԾ	324	1
ԽՈՉ	1171	1
ՇՈՒՆ	18	2
ՀԱՎ	14	

Անկասկած, վերը բերված աղյուսակի թվական տվյալները չեն կարող հավակնել բացարձակության, սակայն ընդհանուր առմամբ երկու փուլերի միջև հարաբերակցությունը հազիվ թե էականորեն փոխվի։ Գրեթե բոլոր դեպքերում երկու սյունակների միջև եղած տարբերությունը վիթխարի է, և վկայում է հօգուտ այն հնթադրության, որ վաղերկաթեդարյան Կորուջութեփեն իրենից ընդամենը մի խղճուկ բնակավայր է ներկայացրել։

Իսկ այժմ ներկայացնենք Գորդիոնի համաժամանակյա փուլի համար

[10] K. Bartl. Die Frühe Eisenzeit in Ostanatolien und ihre Verbindungen zu den benachbarten Regionen.—Baghdader Mitteilungen, Bd.25, 1994, S.473ff. Some Remarks on Early Iron Age in Eastern Anatolia.—Anatolica, vol. XXI, 1995, p. 207f.; Sh. M. M. Winn. The Early Iron Age Pottery.—In: Korucutepe III (Ed. M. N. von Loon). Amsterdam, 1980, p. 155ff.

[11] K. Bartl.—Anatolica XXI, p. 209.

[12] J. Boessneck und V. von den Driesch. Tierknochenfunde vom Korucutepe bei Elazig in Ostanatolien. Fundmaterial der Grabungen 1968 und 1969.—In: Korucutepe I. Amsterdam, 1975, S. 24, Tab. 3.

վերականգնվող իրավիճակը ըստ 1988—1989 թթ. պեղումների տվյալների[13]։ Ստորև տրվում են ետխեթական շրջանի Յասսըհյուք-Գորդիոնի առաջին՝ 7B փուլը բնորոշող տվյալները։

Շերտի սկիզբը—Մ. թ. ա. XII դարի առաջին կես։ Ուշբրոնզեդարյան և վաղերկաթեդարյան շերտերի միջև ժամանակագրական ճեղքվածք գրեթե չկա։ Անցումը տեղի է ունեցել առանց ավերածությունների։

Ճարտարապետություն—Պարզունակ շինարարական տեխնիկա։

Խեցեղեն—Խեցեգործական միակ համալիրը բաղկացած է սև գույնի, առանց բրուտի անիվի պատրաստված և ցածր ջերմաստիճանի տակ թրծված անոթներից։ Բոլոր իրերը տնայնագործական արտադրանք են։ Արհեստանոցային ստանդարտացված անոթներ չկան։

Բնակիչների կենցաղը—Պարզունակ, պետականորեն չկազմակերպված փոքր բնակավայր։

Շերտի տևողությունը—Մինչև մ. թ. ա. 1000 թ. մոտերքը։

Շերտի ավարտը—Հաջորդ՝ 7A փուլը նախորդի մշակութային շարունակությունը չէ. 7B-ի խեցեգործական ավանդույթները այլևս չեն շարունակվում։

Գորդիոնի վաղ երկաթեդարյան փուլի վերը տրված բնութագիրը անհրաժեշտ է լրացնել այդ մշակույթի կրողների վերաբերյալ գոյություն ունեցող գերիշխող տեսակետով[14]։

Ըստ հետազոտողների շրջանում տարածված կարծիքի, 7B փուլի բնակիչները որոշակիորեն առնչվում են Հյուսիսային Բալկանների և մ. թ. ա. XIII դարի վերջերի Տրոյա VIIB2-ի հետ։ Հիմքը՝ վերջինիս գերիշխող խեցեղենի՝ Buckelkeramik-ի («ելունդավոր») և 7B-ի միջև եղած զգալի ընդհանրությունն է։ Այսպիսով, կարելի է ենթադրել, որ խեթական տերության տրոհման շրջանում՝ մ. թ. ա. XIII դարի վերջերին—XII դարի սկզբներին Հյուսիսային Բալկաններից ընթացած էթնիկական տեղաշարժերի արդյունքում Հյուսիս-արևմտյան Փոքր Ասիայում և Սանգարիոսի հովտում կարող էին հայտնվել պարզունակ կենսագործունեությամբ բնորոշվող բնակչության խմբեր։

Ինչպես տեսնում ենք, Իսուվայում (ժամանակակից Էլազղի շրջան) և արևմտակենտրոնական Փոքր Ասիայում (Գորդիոն) միևնույն ժամանակահատվածի ընթացքում հայտնվում են գրեթե միևնույն կերպ բնութագրվող, սակայն ակնհայտորեն տարբեր ելակետ և ծագում ունեցող մշակույթներ։ Եվ որ առավել կարևոր է, երկուսն էլ որևէ կերպ չեն առնչվում նախորդող և հաջորդող շերտերի հետ։ Դրանք նման են ինչպես հայտնվելու եղանակի (խաղաղ ներթափանցում արդեն ապաբնակեցված կամ, համենայնդեպս, զգալիորեն բնակաթափ եղած բնակավայրեր), այնպես էլ պատմության ասպարեզից հեռանալու (ապաբնակեցում առանց արտաքին միջամտության) հարցում։

Ինչպիսի քաղաքական և սոցիալական իրավիճակում էր հնարավոր բավական մեծ ժամանակագրական ընդդրկում ունեցող վերոհիշյալ բնակավայրերի գոյությունը։ Ինչով կարող էր պայմանավորված լինել ուշբրոնզեդարի վերջերին քաղաքական, տնտեսական և մշակութային լավ ավանդույթներ

---

13 R. C. Henrickson. Continuity and Discontinuity in the Ceramic Tradition of Gordion During the Iron Age.—In: Anatolian Iron Ages. 3 (eds. A. Çilingiroglu and D. H. French). London, 1994, p. 107ff.

14 C. W. Blegen. Troy IV.—Princeton, 1958, p. 159; E. B. French. Possible Northern Intruders at Mycenae.—In: Thracians and Mycenaeans (eds. J. G. P. Best and N. H. W. de Vries). Leiden, 1989, p. 133f.; J. Rutter. Ceramic Evidence for Northern Intruders in Southern Greece at the Beginning of the Late Helladic IIIC Period.—American Journal of Archaeology, vol. 79, 1975, p. 17ff.; K. DeVries. The Gordion Excavation Seasons of 1969—1973 and Subsequent Research.—American Journal of Archaeology, vol. 94, 1990, p. 371—406, և այլն։

ունեցող Խուվայի և Սանգարիոսի հովտի բնակչության նման վայրընթաց զարգացումը։

Այսօր մասնագիտական շրջանակներում այս երևույթի համար չկա որևէ հիմնավոր բացատրություն։ Շրջանառության մեջ են մ. թ. ա. XII դարի խոշոր միգրացիաները[15], բնակլիմայական պայմանների վատթարացումը[16] կամ ուղղակի հնարավոր տարբեր պատճառների միաժամանակյա ներգործությունը։ Բանն այն է, որ Խուվայի և Գորդիոնի համար վերականգնվող իրավիճակը գրեթե միևնույն բնութագրիչներով առկա է Առաջավոր Ասիայի և Էգեիդայի այլ վայրերում ևս[17], այսինքն, քննարկվող երևույթը հատկանշական է եղել ողջ ժամանակաշրջանի համար։

Խուվայի հնավայրերի ապաբնակեցումը ուշբրոնզեդարի վերջերին (մ. թ. ա. XII դարի առաջին կեսի ընթացքում) հազիվ թե հնարավոր լինի բացատրել հարավից եկող սպառնալիքով, տվյալ պարագայում՝ Թուկուլթի-Նինուրտա I-ի արշավանքների փուլում[18]։ Այդ բնույթի արտաքին սպառնալիք նույնպես դժվար է ենթադրել, նկատի ունենալով բնակավայրերի լքման խաղաղ եղանակը (տե՛ս վերը)։ Որպես աշխատանքային վարկած խնդրի ուսումնասիրման տվյալ փուլում հակված ենք դեպի մերձավորարևելյան ճգնաժամի ընթացքում վկայված հետևյալ գործընթացը, որը բնութագրական է Առաջավոր Ասիայի և Էգեիդայի համաժամանակյա քաղաքակրթության կենտրոնների համար։

Տարբեր տարածաշրջաններում պարզորոշ նկատվում են ուշբրոնզեդարյան կենտրոնների զարգացման հետևյալ հաջորդական փուլերը[19]։

1) Բնակչության և բնակավայրի քանակական և տարածական աճ, որն ուղեկցվել է ամրաշինական աշխատանքներով։ Պատճառը՝ շրջակա երկրագործական շրջանների բնակչության ներհոսք, հիմնականում ոչ արտաքին սպառնալիքի թելադրանքով։ Օրինակ, Սալամինը և Կիտիոնը (Կիպրոս), Յալիսոսը (Հռոդոս), Պելոպոննեսի մի շարք բնակավայրեր (Միկենք, Տիրինթոս և այլն), Խաթթուսաս, Գորդիոն և այլն։

---

15 Միգրացիոն գործոնի դերի շուրջ կարծիքների տեսության համար տե՛ս R. D. Barnett. The Sea Peoples.—In: CAH, vol. II, 1967, ch. XXVIII, 3ff.

16 Մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամի գործում բնակլիմայական գործոնի դերի շուրջ տե՛ս R. Carpenter. Discontinuity in Greek Civilization, Cambridge, 1966 (Միկենյան Հունաստանի համար); J. Neumann and S. Parpola. Climatic Change and the Eleventh—Tenth Century Eclipse in Assyria and Babylonia.—Journal of Near Eastern Studies, vol. 46, 1987, p. 161ff. (Միջագետքի համար); H. Klengel. «Hungerjahre» in Hatti.—Altorientalische Forschungen, Bd. 1, 1974, S. 165ff.; W. Helck. Nochmals zu Ramses III Seevolkerbericht.—Studien zur altägyptische Kultur, Bd. 14, 1987, S. 129ff. (Փոքր Ասիայի համար); B. Weiss. The Decline of Late Bronze Age Civilization as a Possible Response to Climatic Change.—Climatic Change 4, 1982, p. 173ff.; Ա. Վ. Քոսյան. Կրկին էթնիկական տեղաշարժերի մասին.—«Պատմա-բանասիրական հանդես», 1994, № 1—2, էջ, 247—255։

17 Միկենյան Հունաստանում այս պրոցեսի հետ առնչվող նորագույն ուսումնասիրությունների շուրջ տե՛ս J. D. Muhly. The Crisis Years in the Mediterranean World: Transition or Cultural Disintegration?—In: The Crisis Years, 1992, p. 10ff.

18 Թուկուլթի-Նինուրտա I-ի կառավարման սկզբին ձեռնարկված արշավանքների ընթացքում, ըստ իր իսկ տեքստերի (A. K. Grayson. Assyrian Royal Inscriptions. Vol. I, Wiesbaden, 1972, 773, 783), որևէ ակնարկ չկա Խուվայի նկատմամբ ձեռնարկված պատժիչ միջոցառումների մասին։ Եփրատի աջակողմյան տարածքներից 28,800 գերիների ձեռքբերման մասին հաղորդումը չէր կարող առնչվել Խուվայի հետ։ Անհրաժեշտ է հաշվի առնել նաև տվյալ խնդրում առկա ժամանակագրական անհամապատասխանության փաստարկը. Թուկուլթի-Նինուրտայի ռազմական գործողությունները հյուսիսում թվագրվում են մ. թ. ա. 1230-ական թթ. («Իմ գահակալման առաջին տարում ես...», A. K. Grayson. Op. cit.), այնինչ Խուվայի բնակավայրերի ապաբնակեցումը ընկնում է դրանից ավելի քան կես դար հետո։

19 Տե՛ս Ա. Քոսյան. Մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը։

2) Քաղաքային բնակչության քիչ թե շատ զանգվածային արտագաղթ։ Արդյունքում բնակավայրերը կամ ամբողջովին լքվում են (օրինակ, Խաթթուսաս, Գորդիոն) կամ տեղում մնում է բնակչության մի փոքր մասը (Միկենք, Ալդպիսի։ պաբնակեցված բնակավայրերը կամ ընդհանրապես այլևս չեն վերաբնակեցվում կամ չհեռացած բնակչությունը շարունակում է նախկին մշակութային ավանդույթները անհամեմատ ավելի ցածր կատարողական մակարդակով։ Օրինակ, ուշհելադյան IIIC փուլի (մոտավորապես մ. թ. ա. 1196—1040 թթ.) Միկենքը իրենից ներկայացնում է մի խղճուկ բնակավայր, որը ոչնչով չի նմանվում Ագամեմնոնի քաղաքին։

Այսօր վերը նշված փուլերի համար առաջարկվող առավել համոզիչ մեկնաբանությունը տվյալ տարածքի քաղաքական և տնտեսական կառույցների լիակատար անկումն է, որի ներգործության հետևանքով քաղաքային լավ ավանդույթներ ունեցող բնակչությունը կամ 1) հեռանում է իր կենցաղավարման եղանակի համար ավելի նպաստավոր վայրեր, կամ 2) տասնամյակների ընթացքում անցնում է առավել պարզունակ՝ գյուղական կենցաղի[20]։

Առաջին հայացքից, նկատի ունենալով մեր ձեռքի տակ եղած հնագիտական ուսումնասիրությունների արդյունքները, որոշ վերապահումներով կարելի է պայմանականորեն ընդունել վերոհիշյալ սխեման։ Սակայն, այնուամենայնիվ, պիտի նկատի ունենալ այն, որ Իսուվայի վաղ երկաթեդարյան խեցեղենի ստեղծողներին դժվար է, եթե ոչ անհնար, դիտել որպես գյուղական կենցաղի անցած նախկին բնակիչներ։ Ի թիվս այլ փաստարկների, չի կարելի անտեսել մ. թ. ա. XII դարի կեսերին այս շրջաններում ասորեստանյան աղբյուրներով վկայված օտարամուտ մուշկերի, կասկ-ապիշլուների և ուրումների ներթափանցման փաստը։ Ըստ այդմ, գերադասելի է ենթադրել բնակավայրերի բնակչության կամավոր արտագաղթը դեպի հարևան տարածքներ։ Որպես նրանց մեկնակետ, իհարկե, առանց որևէ հիմնավորման, հնարավոր ենք համարում առաջարկելու Եփրատի աջափնյակը։ Բանն այն է, որ այստեղ, խեթական տերության տրոհումից անմիջապես հետո, առանց ժամանակագրական ճեղքվածքի, ձևավորվել էր ետխեթական Մելիդի թագավորությունը։ Վերջինս մի առժամանակ ձևականորեն հանդիսանում էր հյուսիսսիրիական Կարգամիս պետությունից կախյալ թագավորություն։ Ետխեթական առաջին փուլում (մ. թ. ա. XII—XI դարեր) նախկին խեթական տերության արևելյան շրջանները, դատելով այստեղ պետականության ավանդույթների շարունակականության փաստից և հնագիտական ուսումնասիրությունների արդյունքներից[21], նախորդ՝ ուշբրոնզեդարյան փուլի նկատմամբ քաղաքական և մշակութային խզվածք ցույց չեն տալիս։ Նման ենթադրության օգտին կարելի է բերել ևս մի նկատառում, այն է՝ խեթական տերության և Իսուվայի միջև մ. թ. ա. XIV—XIII դարերում գոյություն ունեցող դաշնակցային հարաբերությունների փաստը[22]։

---

20 Ուշբրոնզեդարյան կենտրոնների բնակչության կենսագործունեության մեջ պարզորոշ նկատվող այս միտումը հստակ ձևակերպված է Սիրիայի օրինակով (M. Liverani. The Collapse of the Near Eastern Regional System at the End of the Bronze Age: the Case of Syria.—In: Center and Periphery in the Ancient World (eds. M. Rowlands, M. Larsen and K. Kristiansen), Cambridge, 1987, p. 66ff.):

21 K. Bittel. Die archaologische Situation in Kleinasien um 1200 v. Chr. und während der nachfolgenden vier Jahrhunderte.—In: Griechenland, die Ägäis und die Levante während der «Dark Ages» vom 12. bis zum 9.Jh. v. Chr. Akten des Symposions von Stift Zwettl (NO) 11.—14. Oktober 1980 (Hrsg. von S. Deger-Jalkotzy). Wien, 1983, S. 39f.

22 Խաթթիի և Իսուվայի միջև գոյություն ունեցող դաշնակցային հարաբերությունների օգտին է վկայում մ. թ. ա. XIII դարի 30-ական թթ. սկզբով թվագրվող խեթական արքա Թուդխալիյաս IV-ի և Թարի-ունաասսայի արքա Ուլմի-Թեշուբի միջև կնքված պայմանագրի վկաների թվում Իսուվայի արքա Արի-շարրումայի հիշատակությունը (Keilschrifturkunden aus Boghazkoi, IV, 10 Rs. 29):

Իսուվայի բնակավայրերում մ. թ. ա. XII—X դդ. պարզորոշ նկատվող վերընթաց զարգացման միտումների լույսի տակ անհնար է խուսափել վաղերկաթեդարյան փուլում այս երբեմնի աշքի ընկնող պետության քաղաքական կազմակերպման աստիճանի խնդրից։ Ուսումնասիրվող ժամանակաշրջանում ի՞նչ, կարող էր ներկայացնել իրենից հարմար աշխարհագրական դիրք և մեծ նյութական ռեսուրսներ ունեցող այս տարածքը։ Աղբյուրների սղության պատճառով առայժմ կարելի է սահմանափակվել միայն նախնական ենթադրություններով, որոնք հենվում են որոշ անուղղակի փաստերի վրա։

Իսուվայի անմիջական հարևան լուվիական Մելիդի՝ մ. թ. ա. XII—X դդ հիերոգլիֆային արձանագրություններում Եփրատի ձախափնյակի որևէ հիշատակություն չկա. մելիդյան արքաների բոլոր արշավանքները ուղղված են եղել դեպի արևմուտք[23]։ Եթե նկատի ունենանք, որ առկա գրավոր աղբյուրների հիման վրա դժվար է Եփրատից մինչև Վանա լիճ ընկած տարածքում մ. թ. ա. XII—X դդ. ենթադրել որևէ խոշոր քաղաքական միավորի գոյություն, որը կարող էր Իսուվայի տարածքի նկատմամբ ազդեցություն ունենալ, ապա հավանական է թվում, որ վերջինս պիտի գտնվեր Մելիդի կազմում։ Համենայնդեպս, Ուրարտուի արևմտյան էքսպանսիայի շրջանում նման ենթադրության համար լուրջ հիմքեր կան[24]։ Հազիվ թե ռազմաքաղաքական և տնտեսական մեծ պոտենցիալ ունեցող Մելիդը, որի արքաների նվաճումները հասնում էին ընդհուպ մինչև ժամանակակից Կայսերի և Կիլիկյան դարպասներ, չհրապուրվեին Եփրատի աջափնյակի հարուստ պղնձահանքերով և բերրի հողերով։ Եվ դա այն դեպքում, երբ Իսուվայի վաղերկաթեդարյան փուլի ամենահնամյա բնակավայրերը գտնվում էին Մելիդի համանուն մայրաքաղաքից (ժամանակակից Արսլանթեփե գյուղի տեղում՝ Մալաթիայից 7 կմ հյուսիս-արևելք) հազիվ 50—60 կմ վրա։ Միևնույն ժամանակ դժվար է ենթադրել, որ Մելիդի մայրաքաղաքը գտնվել է պետության սահմանամերձ գոտում։

ИСУВА И ГОРДИОН В XII—X веках до н. э.
(Сравнительный анализ)

Доктор истор. наук А. В. КОСЯН

Резюме

Результаты сравнительного анализа археологической ситуации в двух различных регионах Передней Азии (правобережная зона верхнеевфратской долины—территория государства Исува и долина реки Сангарий—поздний Гордион) в период XII—X вв. до н. э. однозначно указывают на практически идентичную линию историко-культурного развития этих областей после распада Хеттской империи. Это—всеобщая политическая, социально-экономическая и культурная деградация некогда развитых городских цивилизаций в ходе ближневосточного кризиса XII в. до н. э. Аналогичные тенденции в развитии позднебронзовых центров налицо также в других регионах древней Передней Азии и Эгеиды. Так как население раннежелезного периода изучаемых регионов представляло собой пришлый элемент, в статье выдвигается рабочая гипотеза, согласно которой позднебронзовое население могло мигрировать в более подходящие для своей жизнедеятельности области, например, в правобережные районы верхнеевфратской долины. Такой ход событий хорошо укладывается в рамки ближневосточного кризиса, когда распад государственных структур и экономического базиса обществ являлись причиной усиления мобильности не только «варварской» периферии, но также и развитых городских цивилизаций.

---

23 Ա. Քոսյան. Ուշբրոնզեդարյան Մելիդ պետությունը.— «Վրաբեր հասարակական գիտությունների», 1980, № 4/6, էջ 62—70։

24 Н. В. Арутюнян. Топонимика Урарту. Ереван, 1985, с. 140 сл.

ISUWA AND GORDIOM IN THE XII—X CENTURIES B. C
(A comparative study)

Dr. of Hist Sc., A. V. KOSSIAN

The comparative study of archaeological situation in two distant areas of the Near East (eastern part of the Upper Euphrates valley—the territory of the kingdom of Isuwa, and the Sangarius valley—Phrygian Gordion) in the XII—X c. B. C. clearly illustrates the identical line of historical-cultural development of these regions after the disintegration of the Hittite Empire. These are—total political, socio-economic and cultural degradation of once flourishing urban centers in the course of the Near Eastern crisis in the XII century B. C. The same tendencies in the development of Late Bronze Age civilizations are traceable also in other areas of the Near East and the Aegean. Since the population of areas under investigation in the Early Iron Age period was intrusive, the author puts down a working hypothesis, according to which the Late Bronze Age settlers could have had migrated to the western part of the Upper Euphrates valley. This idea is in good concordance with the framework of the Near Eastern crisis, when disintegration of state structures and economic basis of societies had intensified the mobility of «barbarian» periphery as well as developed urban civilizations.